ՁՐՈՒՅՑ ԳԵՂԱՆԿԱՐՉԻ ՀԵՏ

Արամ Իսաբեկյանը 50 տարեկան է: Արարատյան Հայրապետական թեմի և «Շողակն Արարատյան» թերթի ընթերցողների անունից ջերմորեն շնորհավորում ենք երիտասարդ նկարչի ծննդյան տոնը՝ մաղթելով նրան քաջառողջություն, ստեղծագործական նոր մղումներ և երջանկություն:

Արամ Իսաբեկյանը ծնվել է 1952 թ. Երևանում: 1970-1976 թթ. ավարտել է Երևանի Գեղարվեստա-թատերական ինստիտուտի գեղանկարչության բաժինը: 1990-ին արժանացել է դոցենտի կոչման, 1992-ին՝ պրոֆեսորի: 1982-ից Նկարիչների միության անդամ է, 1993-1998 թթ. միության Գեղանկարչության բաժնի վարիչը: 1990-1994 թթ.՝ Երևանի Գեղարվեստա-թատերական ինստիտուտի պրոռեկտոր, 1994-ից՝ Գեղարվեստի ինստիտուտի (այժմ՝ Ակադեմիայի) ռեկտորն է: Արարատյան Հայրապետական թեմի թեմական խորհրդի անդամ է: 1976-ից մասնակցել է հանրապետական և միջազգային ցուցահանդեսների: Արամ Իսաբեկյանի նկարներից կան Երևանի ազգային պատկերասրահում, Երևանի ժամանակակից արվեստի թանգարանում, Մոսկվայի Տրետյակովյան թանգարանում և բազմաթիվ անհատական հավաքածուներում:

սահմանյան արձակը՝ հատկապես Հեմինգուեյ, Գարսիա Մարկես: Բայց, իհարկե, շատ եմ սիրում նաև հայ գրականություն: Առանց Թումանյանի՝ կայացած մարդ չեմ պատկերացնում: Մեր տանը հիանալի գրականություն ունենք, որի մի մասը նվիրել եմ Գեղարվեստի ակադեմիային: Ցավոք սրտի, այժմ ուսանողությունը չի կարդում: Բայց չէ՞ որ ստեղծվող հիանալի գրքերը, հոդվածները ընթերցողի են սպասում: Ցավում եմ, որ երիտասարդները բավարարվում են միայն հեռուստատեսությամբ և ինտերնետով: Չէ՞ որ կարդալն ամենակարևորն է մարդու զարգացման համար: Մարդ ինչպե՞ս կարող է լիարժեք անձնավորություն դառնալ առանց գիրք կարդալու:

- Պրն. Իսաբեկյան, մեծ է Ձեր շփումը եկեղեցու և եկեղեցական գործիչների հետ: Դա ինչ-որ կերպ անդրադառնո՞ւմ է Ձեր ստեղծագործությունների վրա:

- Հայ Առաքելական եկեղեցին և հայ մշակույթը դարեր շարունակ շաղկապված են միմյանց: Եթե ես ոչ մի կրոնի չպատկանեի, և իմ առջև դրված լիներ ընտրություն կատարելու խնդիր, ապա ես կընտրեի քրիստոնեությունը: 4-րդ դարից մինչև 20-րդ դարի սկզբի արվեստի հիանալի ստեղծագործությունները, որոնցով հիանում է աշխարհը, ստեղծվել են քրիստոնեության շնորհիվ: Այո, ես քրիստոնյա եմ և հպարտ եմ դրանով: Փառք Աստծո, որ Հայաստանի անկախությամբ մեր հոգիները բացվեցին դեպի Աստված, դեպի Հայ եկեղեցի: Ես հոգեպես կապված եմ մեր եկեղեցուն: Նաև Արարատյան Հայրապետական թեմի թեմական խորհրդի անդամ եմ և աշխատում եմ ամեն կերպ օգտակար լինել Հայ եկեղեցուն:

Իմ արվեստում անդրադարձել եմ նաև քրիստոնեական թեմաներին:

- Իսկ կարո՞ղ էիք ապրել Հայաստանից դուրս:

- Ես ուրիշ երկրներում ապրելու հնարավորություն միշտ ունեցել եմ և հիմա էլ ունեմ, բայց եթե մինչև 50 տարեկանս չեմ հեռացել հայրենիքից, այսուհետ էլ չեմ հեռանա: Կարծում եմ, որ արվեստագետն իրավունք ունի ամեն տեղ ապրելու: Արվեստը նեղ, ազգային չի լինում: Իսկական արվեստը համամարդկային է, և ար-

- 50 տարին կես դար է, որպես արվեստագետ, ստեղծագործող ի՞նչ խոհեր ունեք:

- Կարող եմ ասել, որ 50 տարվա ընթացքում շատ բաների հասել եմ, բայց դեռ բավականին անելիքներ ունեմ: Թեև կարելի է ասել, որ տարիների ընթացքում ժամանակը դառնում է ավելի քիչ: Շատ ծրագրեր կան՝ ստեղծագործական և հասարակական, որոնք պետք է իրագործվեն:

Մարդն իր կյանքի ընթացքում պետք է հաճախ ետ նայի՝ տեսնելու, թե ինչ է արել: Ետ նայելիս ես տեսնում եմ, որ բավականին գործ է արված:

- Դուք 12 տարի աշխատում եք Գեղարվեստի ակադեմիայում: Խնդրում եմ պատմել այդ մասին:

- Ռեկտորությանս 8 տարիների ընթացքում Գեղարվեստի ակադեմիայում բավականին աշխատանքներ են կատարվել: Եթե 8 տարով ետ գնանք, կտեսնենք, որ մենք ունեինք ընդամենը Իսահակյան 36 հասցեում գտնվող մի խարխուլ, կիսավեր շենք և ուրիշ ոչինչ, որի լաբորատորիաներն անգամ չէին աշխատում: Շատ առարկաներ դասավանդվում էին միայն տեսականորեն, առանց գործնական աշխատանքների: Իսկ հիմա մենք Երևանում ունենք երկու շենք, նաև մասնաճյուղեր Գյումրիում և Դիլիջանում: Բացվել են նոր բաժիններ, ուսանողների թիվը 200-ից հասել է 500-ի: Ակադեմիայում ունենք ցուցասրահ, պատրաստվում ենք նաև շքեղ գրադարան բաց անել: Այսինքն՝ ակադեմիան վերելքի մեջ է:

- Դուք ընտրել եք գեղանկարչությունը, ինչո՞վ է դա հիմնականում պայմանավորված:

- Ես բնական եմ համարում իմ ընտրությունը: Ծնողներս գեղանկարիչներ են ու ես փոքրուց իսկ պարզապես սիրահարված էի նկարչությանը: Եթե կան նկարիչներ, որոնք զբաղվում են նկարչությամբ պարզապես զբաղվելու համար, ապա ես նկարում եմ, որովհետև իսկապես սիրում եմ, ապրում եմ դրանով:

Եթե ես նույնիսկ նկարիչ չլինեի, իմ ընտրությունը կրկին արվեստի բնագավառից կլիներ:

- Գրականության մեջ արձա՞կն եք նախընտրում, թե՞ չափածոն:

- Շատ եմ սիրում արձակը և հիմնականում արտա-

վեստագետի համար որտեղ հարմար է, կարող է այնտեղ էլ ստեղծագործել: Բայց ես շատ եմ կապված Հայաստանի հետ, որն իմ ստեղծագործելու, աշխատելու նվիրական վայրն է: Եվ որքան էլ շրջեմ օտար երկրներում, իմ վերադարձը միշտ դեպի Հայաստան է լինելու:

- Արվեստագետի համար յուրաքանչյուր ստեղծագործություն երեխայի պես է, որից դժվար է բաժանվելը: Ո՞ր նկարն եք ամենասրտամոտը համարում:

- Ամեն նկար նկարչի համար, իրոք, կարծես իր երեխան լինի: Ես զարմանալիորեն հեշտ եմ բաժանվում նկարներիցս, բայց հետո կարոտում եմ: Իմ 200-ից ավելի նկարներ Հայաստանից դուրս են գտնվում: Այո, կան մի քանի նկարներ, որոնք ես շատ եմ սիրում: Միշտ մերժել եմ գնելու ցանկացած առաջարկ, որքան էլ բարձր գին առաջարկվի: Հատկապես շատ եմ սիրում աղջկաս՝ Աննայի դիմանկարը, որը կոչվում է «Վերածնունդ», և հորս դիմանկարը:

- Պրն. Իսաբեկյան, Դուք ստեղծագործում եք տարբեր ոճերով, Ձեզ ո՞ր ոճն է ավելի հոգեհարազատ:

- Ինձ համար ծանոթալի է մի ոճով նկարելը: Հաճախ ոճերի փոփոխությունները կապված են իմ կյանքի առանձին դրվագների հետ: Տարբեր ժամանակներում տարբեր կերպ է արտահայտվել հոգիս կտավների վրա: Ես բազմաթիվ նատյուրմորտներ, դիմանկարներ, բնանկարներ եմ ստեղծել, որոնք հավասարապես սիրում եմ: Վերջին ժամանակներս ավելի շատ դիմանկարներ եմ նկարում:

- Ինչպիսի՞ ծրագրեր ունեք:

- Այս տարի պետք է հոբելյանական ցուցահանդես կազմակերպեի, ինչը, սակայն, չստացվեց: Պատճառը Երևանի ցուցասրահների ու դահլիճների նորոգումն է, իսկ սեպտեմբերին Նկարիչների միությունում կայացավ միության 70-ամյակին նվիրված ցուցահանդեսը: Վերջին անհատական ցուցահանդեսս եղել է 1994 թ. Ազգային պատկերասրահում: Նպատակադրվել եմ եկող տարի կատարել պարտքս՝ հանդես գալ նոր խոսքով, ստեղծագործական ուրույն լուծումներով:

- Շնորհակալություն:

Զրույցը վարեց Անի ՄԱԹԵՎՈՍՅԱՆ